Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի Դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հայցվորի կողմից ներկայացված հայցով վճարվել է 30.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումար: Հետևաբար պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-194 հոդվածներով, դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

«ԱՐՏԴԻԱՆՇԻՆ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «ԱՐՏԴԻԱՆՇԻՆ» ՍՊ ընկերության միջև 25.10.2021թվականին կնքված «ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/4» ծածկագրով պայմանագրի 23.01.2023թվականի թիվ 1/18-4/4237-2023 միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

Կիրառված հայցի ապահովման միջոցները պահպանել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ Ն.ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ծանոթություն. վճիռը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ _____ 2023թ.

ԴԱՏԱՎՈՐ Ն.ԱՎԵՏԻՍՅԱՆ